ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 221-Ն	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀԳՏ 2020.06.30/23(691) Հոդ.143	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով	*Ընդունման ամսաթիվը*	19.06.2020
Ստորագրող մարմինը	Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ	*Ստորագրման ամսաթիվը*	19.06.2020
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	19.07.2020	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Ծանուցում

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հուլիսի 19-ից, բացառությամբ 1-ին կետի 4-րդ ենթակետի և 2-րդ կետի՝ ջերմային էլեկտրակայաններում (այդ թվում՝ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության կայաններում) էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձ հանդիսացող սպառողներին առնչվող հարաբերությունների մասով, որոնք ուժի մեջ են մտնում 2020 թվականի օգոստոսի 1-ից:

Կապեր այլ փաստաթղթերի հետ

Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՍՊԱՌՈՂՆԵՐԻՆ ՎԱՃԱՌՎՈՂ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՍԱԿԱԳՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի N 333-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

19 հունիսի 2020 թվականի
ք. Երևան

N 221-Ն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՍՊԱՌՈՂՆԵՐԻՆ ՎԱՃԱՌՎՈՂ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՍԱԿԱԳՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի N 333-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, 21-րդ, 22-րդ հոդվածները, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37Ի-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 23-ի N 359-Ն որոշումը և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի նոյեմբերի 3-ի N 1118-Ն, N 1122Ի-Ն որոշումները, ինչպես նաև «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության 2020 թվականի ապրիլի 1-ի հայտը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը ***որոշում է.***

1. Սահմանել «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության կողմից՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի նոյեմբերի 3-ի N 1122-Ն որոշման համաձայն

սոցիալապես անապահով ընտանիք համարվող սպառողներին վաճառվող յուրաքանչյուր հազար խորանարդ մետր բնական գազի սակագինը՝ տարեկան՝

ա. մինչև 600 խորանարդ մետր բնական գազի համար՝ **100000** դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ. 600 խորանարդ մետրը գերազանցող բնական գազի համար՝ **139000** դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

2) գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող ջերմոցային տնտեսություններին վաճառվող յուրաքանչյուր հազար խորանարդ մետր բնական գազի՝

ա. յուրաքանչյուր ամսվա սակագնի հաշվարկման բանաձևը՝ նոյեմբերի 1-ից մինչև մարտի 31-ը ներառյալ ժամանակահատվածի համար՝

$$P_{Ջ} = 224 * E,$$

որտեղ՝

$P_{Ջ}$-ն գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող ջերմոցային տնտեսություններին նոյեմբերի 1-ից մինչև մարտի 31-ը ներառյալ ժամանակահատվածում վաճառվող բնական գազի յուրաքանչյուր հաշվետու ամսվա սակագինն է (դրամ/հազար խորանարդ մետր)՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

E-ն յուրաքանչյուր հաշվետու ամսվան նախորդող ամսվա 25-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հրապարակված մեկ ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքի մեծությունն է,

բ. սակագինը՝ ապրիլի 1-ից մինչև հոկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածի համար՝ ամսական մինչև 10 հազար խորանարդ մետր բնական գազի համար՝ սույն կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված սակագնին հավասար, իսկ ամսական 10 հազար խորանարդ մետրը գերազանցող բնական գազի համար՝ սույն կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերությամբ սահմանված բանաձևի համաձայն հաշվարկվող սակագնին հավասար,

3) գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող վերամշակող՝ պահածոների, խմիչքների և կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող, անձանց վաճառվող յուրաքանչյուր հազար խորանարդ մետր բնական գազի՝ յուրաքանչյուր ամսվա սակագնի հաշվարկման հետևյալ բանաձևը՝

$$P_{Վ} = 224 * E,$$

որտեղ՝

$P_{Վ}$-ն գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող վերամշակող՝ պահածոների, խմիչքների և կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող, անձանց վաճառվող բնական գազի յուրաքանչյուր հաշվետու ամսվա սակագինն է (դրամ/հազար խորանարդ մետր)՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

4) ջերմային էլեկտրակայաններում (այդ թվում՝ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության կայաններում) էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձանց վաճառվող յուրաքանչյուր հազար խորանարդ մետր բնական գազի՝

ա. սակագինը՝ ամսական մինչև 10 հազար խորանարդ մետր բնական գազի համար՝ **139000** դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ. յուրաքանչյուր ամսվա սակագնի հաշվարկման հետևյալ բանաձևը՝ 10 հազար խորանարդ մետրը գերազանցող բնական գազի համար՝

$$P_{ՋԷԿ} = 255.91 * E,$$

որտեղ՝

$P_{ՋԷԿ}$-ն ջերմային էլեկտրակայաններում (այդ թվում՝ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության կայաններում) էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձանց վաճառվող՝ յուրաքանչյուր հաշվետու ամսում 10 հազար խորանարդ մետրը գերազանցող բնական գազի սակագինն է (դրամ/հազար խորանարդ մետր)՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

5) սույն կետի 1-4-րդ ենթակետերով չնախատեսված մյուս սպառողներին վաճառվող յուրաքանչյուր հազար խորանարդ մետր բնական գազի՝

ա. սակագինը՝ ամսական մինչև 10 հազար խորանարդ մետր բնական գազի համար՝ **139000** դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ. յուրաքանչյուր ամսվա սակագնի հաշվարկման հետևյալ բանաձևը՝ 10 հազար խորանարդ մետրը գերազանցող բնական գազի համար՝

$$P = 255.91 * E,$$

որտեղ՝

P-ն սույն կետի 1-4-րդ ենթակետերով չնախատեսված մյուս սպառողներին վաճառվող՝ յուրաքանչյուր հաշվետու

ամսում 10 հազար խորանարդ մետրը գերազանցող բնական գազի սակագինն է (դրամ/հազար խորանարդ մետր)՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը։

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից, իսկ ջերմային էլեկտրակայաններում (այդ թվում՝ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության կայաններում) էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձ հանդիսացող սպառողներին առնչվող հարաբերությունների մասով 2020 թվականի օգոստոսի 1-ից, ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 25-ի «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության կողմից սպառողներին վաճառվող բնական գազի սակագների սահմանման և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի մայիսի 31-ի N 139-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 333-Ն որոշումը։

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հուլիսի 19-ից, բացառությամբ 1-ին կետի 4-րդ ենթակետի և 2-րդ կետի՝ ջերմային էլեկտրակայաններում (այդ թվում՝ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության կայաններում) էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձ հանդիսացող սպառողներին առնչվող հարաբերությունների մասով, որոնք ուժի մեջ են մտնում 2020 թվականի օգոստոսի 1-ից։

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ՝ **Գ. Բաղրամյան**